Սույն փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սահմանված կարգով և պահանջներին համապատասխան ներքին գնահատման արդյունքում կազմված հաշվետվությունն է:

Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման, ինկողության իրականացման գործընթաց:

Ներքին գնահատման նպատակն է հանդիսանում բարելավել կրթական ծառայությունների մատուցման որակը, նպաստել գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, մանկավարժների աշխատանքի արդյունավետության և սաների առաջընթացի ուսումնասիրման միջոցով:

Հաստատության ներքին գնահատումն իրականացվել է

1. հաստատության անվտանգության,

2.հաստատության գործունեության արդյունավետության և ուսումնական գործընթացի որակի,

3. համայնքի հետ համագործակցության,

4. ծնողի հետ համագործակցության ոլորտներում:

Հաստատության ներքին գնահատման գործընթացում ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները՝

1. Վիճակագրական տվյալների վերլուծություն

2. Փաստաթղթային վերլուծություն

3.Դիտարկում և փաստագրում

4. Հարցումների իրականացում և արդյունքների վերլուծություն

Ներքին գնահատումն իրականացվել է հաստատության տնօրենի 11.09.2024 թ. թիվ 76-Ա հրամանով կազմավորված հանձնաժողովի կողմից:

Ներքին գնահատման հանձնաժողովի նախագահ Ա. Մնացյան



I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ
Կազմակերպաիրավական տեսակը՝ ՀՈԱԿ
Սեփականության ձևը՝ Անհատույց օգտագործում
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ , գ. Ազատան, 19 փողոց, 17/3 շենք
Հեռ.՝ 094002600,arpi.mankapartez14@mail.ru
Պաշտոնական կայքէջ՝ akhuryan.am

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

| Ցուցանիշ | Այո | Մասամբ | Ոչ |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից. | + | | |
| բ. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար. | + | | |
| գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին. | + | | |
| դ. ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից. | + | | |
| ե. ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ. | + | | |

Հաստատությունն ունի տարածք, որը  հեռացված և մեկուսացված է ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուր հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից: Տարածքն ունի քարաշեն պարիսպ: Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին: Մանկապարտեզի տարածքը մաքուր է, աղբը հավաքվում է փակ, հատուկ մակնշված աղբամաններում, տեղափոխվում է տարածքից դուրս տեղադրված հատուկ աղբամաններ, որտեղից  կանոնավոր կերպով կատարվում է աղբահեռացումը:

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և Գյումրիի «Կանխարգելիչ ախտահանում դուստր» ՓԲԸ միջև 20.12.2024թ. պայմանագրի՝ մանկապարտեզի ողջ տարածքում պարբերաբար իրականացվում են դերատիզացիոն միջոցառումներ:

## 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

| Ցուցանիշ | Այո | Մասամբ | Ոչ |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է. | | + | |
| բ.ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերին. | | + | |
| գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր. | + | | |
| դ.ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով. | + | | |
| ե.շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն). | | + | |
| զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով. | + | | |
| է.համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին. | + | | |
| ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին. | + | | |
| թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները դեկորատիվ իրերը. | + | | |
| ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին. | | + | |
| ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական | | | + |

| | | | |
|---|---|---|---|
| մետաղյա վանդակաճաղեր. | | | |
| ժբ. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է. | + | | |
| ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները. | + | | |
| ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով. | + | | |
| ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով. | + | | |
| ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին. | + | | |
| ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին. | + | | |

Հաստատության շենքը շահագործվել է 2014 թվականին: Շենքի ֆիզիկական վիճակը բավարար է: Դիտարկում իրականացնելիս պարզվել է, որ շենքը ունի ընթացիկ վերանորոգման կարիք, չնայած նրան, որ տարիների ընթացքում իրականացվել են առաջացած նստվածքային ներքին ճաքերի վերացում, կոսմետիկ վերանորոգում: Բոլոր պահուստային ելքերը բացվում են դեպի դուրս:

Հաստատությունում նախատեսված չի եղել հակահրդեհային ջրթող համակարգեր, նկուղային հարկ, ինչպես նաև խմբային և ննջարանային բջիջների առանձնացում ի սկզբանե:

Ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով՝ ներօբյեկտային տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգով: Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի միջև 26.04.2024 թ.-ին կնքված պայմանագրի՝ հրդեհի բռնկման դեպքում ազդանշան է տրվում համապատասխան մարմինների:

Հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով: 2025 թվականի մայիսի 22-ին հաստատության տանիքի փայտյա հիմնատարրերը մշակվել են «Օգնեշիտ» հրակայուն լուծույթով:

Ստորին հարկերի պատուհանները չունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր: Հաստատությունը մասամբ է հարմարեցված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժի համար: Թեքահարթակներ ունենք շենքի մուտքի մոտ, միջանցքների և դահլիճների դռները լայն են բացվում:
Հաստատությունում պահպանված են սաների և աշխատակազմի ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ նորմերը: Միջանցքներում, դահլիճներում, խմբասենյակներում փակցված են տարահանման պլան- սխեմաները՝ համապատասխան գունանշումներով:

Բոլոր տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:
Համակարգչային սարքավորումները, հեռուստացույցերն ամուր են տեղադրված: Անիվներով տեղաշարժվող գույքը ամրացված են հատակին: Բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները և դեկորատիվ իրերը:
Հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:

1-ԻՆ ՀԱՐԿԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ




| | |
|---|---|
| 1 Ննջասենյակ/ Խաղասենյակ/ Ճաշասենյակ | 5 էլեկտրական վահանակ |
| 2 Տնօրենի սենյակ | 6 Սանհանգույց |
| 3 Բուժկետ | 7 Դահլիճ |
| 4 Խոհանոց | 8 Պահեստ |

| ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ | |
|---|---|
| ԵԼՔ | Տարահանման ելք |
| ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԵԼՔ | Տարահանման պահեստային ելք |
| | Տարահանման ելքի ուղղություն |
| | Աստիճաններով ներքև |
| | Տարահանման ուղղություն |
| | Տարահանման ուղղություն |
| | Հրշեջ սարքավորումներ |
| | Կրակմարիչ |
| | Ազդարարման կոճակ |
| | էլեկտրական վահանակ |
| | Դեղատուփ |

ԿԱԶՄԵՑ՝ Ա. ՄՆԱՑՅԱՆԸ

«08» 2021թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝ ՏՆՕՐԵՆ Ա. ՄՆԱՑՅԱՆ

«08» 2021թ.

2-ՐԴ ՀԱՐԿԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ




| | |
|---|---|
| 1 Ննջասենյակ/ Խաղասենյակ/ Ճաշասենյակ | 5 Հոգեբանի սենյակ |
| 2 Սանհանգույց | 6 Դահլիճ |
| 3 Մեթոդկաբինետ | 7 Պահեստ |
| 4 Արվեստի սենյակ | |

| ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ | |
|---|---|
| ԵԼՔ | Տարահանման ելք |
| ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԵԼՔ | Տարահանման պահեստային ելք |
| | Տարահանման ելքի ուղղություն |
| | Աստիճաններով ներքև |
| | Տարահանման ուղղություն |
| | Տարահանման ուղղություն |
| | Հրշեջ սարքավորումներ |
| | Կրակմարիչ |
| | Ազդարարման կոճակ |
| | էլեկտրական վահանակ |
| | Դեղատուփ |

Հաստատությունում սաների թիվը համապատասխանում է տրամադրված լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին: Հաստատությունում գործում է կրտսեր 2-րդ «ա», կրտսեր 2-րդ «բ», միջին «ա», միջին «բ» և ավագ «ա», ավագ «բ» տարիքային խմբերը:

Կից ներկայացնում ենք լիցենզիայի լուսապատճենը:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

ԼԻՑԵՆԶԻԱ № 0302

Սույնով վավերացվում է, որ
<<ՀՀ Շիրակի մարզի Ազատանի համայնքի
<<Արփի>> մանկապարտեզ>> ՀՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Շիրակի մարզ, համայնք Ազատան 19-րդ փող. 17/3
(գտնվելու վայրը)

ՀՀ Շիրակի մարզ, համայնք Ազատան 19-րդ փող. 17/3
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Նախադպրոցական կրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը)

Լ. Մկրտչյան
(անունը, ազգանունը)

«16» հունիսի 2017 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՆԵՐԴԻՐ N 001

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱ Ա N 0302 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

**<<ՀՀ Շիրակի մարզի Ազատանի համայնքի <<Արփի>> մանկապարտեզ>> ՀՈԱԿ**
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ <<16>> ՀՈՒՆԻՍԻ 2017 Թ. N 704-Ա/2 ՀՐԱՄԱՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ.

| N | Կրթական ծրագիրը | Հաստատության տեսակը | Տարիքային փուլերը | Համակազմի սահմանային թիվը | Ուսուցման լեզուն | Ուսուցման տևողությունը | Կրթության ձևը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նախադպրոցական | մանկապարտեզ | կրտսեր նախադպրոցական տարիք | 120 | գրական հայերեն | 2 | առկա |
| | | | Ավագ նախադպրոցական տարիք | 60 | գրական հայերեն | 1 | առկա |

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

(ստորագրություն)
Կ.Տ.

Մովսես Մովսիսյան
(անուն, ազգանուն)

16 հունիսի 2017 թ
(ամիս, ամսաթիվ)

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մայիսի 18-ի N 933-Ա/2 և 2022 թվականի հրամանը՝ լիցենզիայի սույն վկայականում «ՀՀ Շիրակի մարզի Ազատանի համայնքի «Արփի» մանկապարտեզ» բառերը փոխարինել «ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» բառերով:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Խմբասենյակներում տեղադրված սեղանները և աթոռները համապատասխանում են երեխաների թվին:

| Խմբասենյակ | Խմբասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը (քմ) | Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ) |
|---|---|---|---|
| Կրտսեր 2-րդ «ա» | 63.21 $մ^2$ | 2,1 $մ^2$ | -0,1 $մ^2$ |
| Կրտսեր 2-րդ «բ» | 63.21 $մ^2$ | 2,1 $մ^2$ | -0,1 $մ^2$ |
| Միջին «ա» | 63.21 $մ^2$ | 2,1 $մ^2$ | -0,1 $մ^2$ |
| Միջին «բ» | 63.21 $մ^2$ | 2,17 $մ^2$ | -0,17 $մ^2$ |
| Ավագ «ա» | 63.21 $մ^2$ | 2,1 $մ^2$ | -0,1 $մ^2$ |
| Ավագ «բ» | 63.21 $մ^2$ | 2,1 $մ^2$ | -0,1 $մ^2$ |

Հաստատությունում խմբասենյակ, խաղասենյակ, ննջասենյակ բջիջները առանձնացված չեն և գործում են մեկ ընդհանուր տարածքում: Կարելի է նախատեսել թեթև կոնստրուկտիվ միջնորմ՝ գոտիները առանձնացնելու նպատակով:

1. ՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին. | Այո | |
| բ. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին. | Այո | |
| գ. հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ. | Այո | |
| դ. ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան. | Այո | |
| ե. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով. | Այո | |
| զ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | Այո | |
| է. ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | Այո | |
| ը. ուսումնական հաստատությունն ապահոված է | Այո | |

| | | |
|---|---|---|
| շուրջօրյա հոսող խմելու ջրով. | | |
| թ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ | Այո | |
| ժ. ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն). | Այո | |
| ժա. հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը. | Այո | |
| ժբ. ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | Այո | |
| ժգ.ուսումնական հաստատության սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ. | Այո | |
| ժդ. ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն. | Այո | |

Ուսումնական հաստատության անձնակազմի և սաների հետ պարբերաբար անցկացվում են ուսումնական վարժանքներ, սեմինարներ, դիտումներ, խաղ-պարապմունքներ՝ արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին ծանոթացնելու, ուսուցանելու նպատակով: Պատասխանատու աշխատակիցները կազմակերպում են շրջայց և իրազեկում հաստատության անձնակազմի և սաների համար՝ ծանոթացնելով հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու և այլն) գտնվելու տեղերին: Իրազեկման հանդիպումների շնորհիվ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին: Հաստատությունում իրականացվել են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ՝ համապատասխան կազմակերպությունների կողմից: Հաստատությունը մշակել է Քաղաքացիական պաշտպանության պլան, որը 24. 01. 2025 թ. համաձայնեցվել է ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ: Հաստատությունը վարում է սաների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների գրանցամատյան:

Ուսումնական հաստատությունում 2024-2025 ուստարում անցկացվել են սաների և աշխատակիցների անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների և հմտությունների ձևավորմանը միտված մի շարք միջոցառումներ: Միջոցառումները ներկայացված են ստորև աղյուսակում և բխում են պլանից:

| Ամսաթիվը | Խումբը | Միջոցառման անվանումը, նկարագիրը, օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը | Մասնակից սաների և աշխատակիցների թիվը |
|---|---|---|---|
| 1.30.10.2024թ. | Ավագ ա,բ | «Բարի ճանապարհ» Նյութեր՝ հեծանիվ, ինքնագլոր, խաղալիք մեքենաներ,լուսացույց, երթևեկության նշաններ,պաստառ: Նպատակը՝ ճանապարհային երթևեկության կանոնների, վարքականոնների ուսուցում: | 49 երեխա, 21 աշխատակից |
| 2.01.11.2024 թ. | Կրտսեր 2-րդ միջին, ավագ խմբերում | «Երեխաների անվտանգության մշակույթի ձևավորում» Նյութեր՝ տեսացրիչ, համակարգիչ,նկար-քարտեր: Նպատակը՝ երեխաների մոտ ձևավորել անվտանգ վարքագծի տարրեր, ծանոթացնել անվտանգության կանոններին տանը և դրսում: | 9 աշխատակից, 150 սան |
| 3. 09.12.2024թ. | Կրտսեր2-րդ,միջին, ավագ խմբերում | «Դիմակայուն հասարակություն:Երկրաշարժը և երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները» տագնապ-վարժանք Նյութեր՝ գրքույկներ, պաստառներ, տեսաժապավեն,հեռուստացույց, բարձրախոս Նպատակը՝ երկրաշարժի ժամանակ գրագետ վարքականոնների ցուցաբերման ուսուցում: | 25 աշխատակից,165 սան |
| 4. 17.06.2025թ. | Կրտսեր 2-րդ միջին, ավագ խմբերում | «Հրդեհաշիջումը նախադպրոցական հաստատություններում» Նյութեր՝ հակահրդեհային լրակազմ, բարձրախոս, տեսանյութ, տեսացրիչ, կրակմարիչ: Նպատակը՝ սովորեցնել երեխաներին և անձնակազմին | 27 աշխատակից, 143 սան |

| | | | |
|---|---|---|---|
| | | իրդեհի ժամանակ կիրառվող վարքականոններ: | |
| 5. 23.06.2025թ. | Ավագ ա,բ | «Երկրաշարժը և երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները» զեկույց Նյութեր՝ ուսուցողական մուլտֆիլմ,ցուցադրական նյութեր, «Ներկիր ինքդ» նյութեր, մատիտներ: Նպատակը՝ երեխաներին ծանոթացնել երկրաշարժ երևույթին, վեր հանել երեխաների գիտելիքները, հաղորդել նոր գիտելիքներ երկրաշարժի ժամանակ ճիշտ վարքականոններ դրսևորելու մասին: | 15 աշխատակից, 60 սան |






CAKE
Water, snacks, a radio,
a flashlight, a whistle, and a first aid kit.



Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, ջեռուցումն ապահովվում է մարդկոցներով: Հաստատության գործածելի ամբողջ տարածքը ջեռուցվում է և ջեռուցման ամիսներին հաստատության ամբողջ տարածքում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին: Ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով: Հաստատության բոլոր սանհանգույցները սարքին վիճակում են և ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով:

Սնունդը կազմակերպվում է հատուկ տարածքում, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին: Սննդի կազմակերպման հատվածում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ պաստառներ:

<table>
<tr><td colspan="7">Հաստատությունում առկա է բուժկետ</td></tr>
<tr><td colspan="7">Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը)</td></tr>
<tr><td colspan="3"><u>Այո</u></td><td colspan="4">Ոչ</td></tr>
<tr><td>Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ)</td><td>Բուժաշխատողներ (թիվը և նրանց պաշտոնները)</td><td>Բուժկետում առկա գույքը</td><td colspan="2">Բուժկետը վերանորոգ-ված է, թե ոչ.</td><td>Բուժկետի սանիտարական վիճակը</td><td>Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը</td></tr>
<tr><td>1-ին հարկ<br><br>72,68 $մ^2$</td><td>1 բուժքույր</td><td>1 փոքր փայտե սեղան<br><br>4 փոքր փայտե աթոռ<br><br>2 մանկական մահճակալ<br><br>2 ներքնակ<br><br>2 վերմակ<br><br>2 պահարան<br><br>1 գրասեղան<br><br>1 աթոռ մեծ<br><br>1 կաշվե բազմոց<br><br>2 բժշկական տապչան<br><br>1 երկաթե պտտվող աթոռ<br><br>1 դեղորայքի պահարան<br><br>2 դեղորայքի սայլակ<br><br>1 կշեռք մեծ<br><br>3 հասակաչափ<br><br>1 առաջին բժշկական օգնության արկղ</td><td><u>Այո</u></td><td>Ոչ</td><td>Բավարար</td><td>Ճնշաչափ<br><br>Ջերմաչափ<br><br>Բինտ, բամբակ<br><br>Ներարկիչ<br><br>Սպեղանի<br><br>Պարացետամոլ<br><br>Դեքսամետազոլ<br><br>Նո-շպա<br><br>Կատվախոտի հանուկ, ոգեթուրմ<br><br>Դիմիդրոլ 1%<br><br>Ջրածնի պերօքսիդ 3%<br><br>Սպիրտ բժշկական 70%<br><br>Յոդի ոգեթուրմ 5%<br><br>Անուշադրի սպիրտ 10%<br><br>Ռետինե սեղմակ</td></tr>
</table>

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

Բուժկետի աշխատանքը համարում ենք բավարար: Առկա են անհրաժեշտ պայմանները և անհրաժեշտ միջոցները ցուցաբերելու առաջին բուժօգնություն: Բուժկետն ունի նաև մեկուսարան՝ համալրված անհրաժեշտ գույքով:

## 4. ՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ. | Այո | |
| բ.ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատաս-խանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ. | Այո | |

Ուսումնական հաստատությունը երեխաների, ծնողների, անձնակազմի հուզական բարեկեցության, սոցիալ-հուզական աջակցության և հոգեկան առողջության խթանման,հոգեսոցիալական տոկունության բարձրացման նպատակով իրականացրել է հանդիպումներ, քննարկումներ, իրազեկման աշխատանքներ, հարցարանային աշխատանքներ՝ ի նպաստ երեխայի ու համայնքի բարեկեցության հաստատությունում նախապաշտպանող, հոգեբանորեն անվտանգ կրթական համակարգ ձևավորելու նպատակով: Վերոնշյալի մասով հաստատությունում ներդրվել է «Ուսումնական հաստատություններում հոգեկան առողջության և հեգոսոցիալական աջակցության» պիլոտային ծրագիրը,որի շրջանակում հաստատվել է համագործակցություն ՀՄԿ-ի, ՏՄԱԿ-ի, ծնողների, համայնքի և շահառու ուսումնական հաստատությունների միջև:

Ուսումնական հաստատությունը ակտիվ համագործակցում է ծնողների հետ տարբեր ձևաչափերով: Հաստատությունը իրազեկման միջոցառումներին հրավիրել է մասնագետներ տարբեր ոլորտներից, անցկացվել են սեմինարներ, կլոր սեղան քննարկումներ:

Մանկապարտեզ-ընտանիք կապը մշտապես պահպանվել է տնայցերի, անհատական և խմբային խորհրդատվությունների, ծնողի հետ զրույցի, ծնողական հանդիպումների, կլոր-սեղան քննարկումների, հարցարանային աշխատանքների և այլ ձևերով: Հաստատությունը առաջին մանկավարժական խորհրդի նիստով հաստատել է տարվա ծնողական կրթության նյութերը և անցկացրել ծնողական կրթություն ըստ ժամանակացույցի՝ բարձրացնելու ծնողների մանկավարժական գիտելիքները, պատասխանատվությունը իրենց պարտականությունների նկատմամբ, զարգացնելու ծնողավարման հմտություններ, երեխայի համար անվտանգ միջավայր ապահովելու և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Հաստատությունը համագործակցում է «Հայկական Կարիտաս» ԲԿ –ի հետ ներառական կրթություն  և սահուն անցումը խելացի կազմակերպելու նպատակով՝ «Իմ իրավունքը 2-րդ մաս: Ներառական կրթությունը Հայաստանում և Կոսովոյում» ծրագրի շրջանակներում:

| *Ամսաթիվը* | *Խումբը* | *Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը* | *Մասնակիցների թիվը* |
|---|---|---|---|
| 17.09.2024թ. | կրտսեր 2-րդ «ա», «բ» | Տարիքային ճգնաժամերը մանկության շրջանում | 46 |
| 11.10.2024թ. | միջին «ա», «բ» | Երեխայի խոսքի զարգացումը 4-5 տարեկանում: | 53 |
| 20.11.2024թ. | ավագ «ա», «բ» | Երեխայի մտավոր զարգացումը 5-7 տարեկանում | 41 |
| 13.12.2024թ. | կրտսեր 2-րդ «ա», «բ» | Ինչպես հասնել ինքնուրույնության | 49 |
| 23.01.2025թ. | միջին «ա, միջին «բ | Նախադպրոցականի սեռադերային սոցիալականացմանը միտված դաստիարակությունը ըն տանիքում | 44 |
| 27.02.2025թ. | ավագ «ա», «բ» | Ինչպես նախապատրաստվել դպրոցին | 51 |
| 18.03.2025թ. | կրտսեր 2-րդ «ա», «բ» | Երբ երեխան սուտ է խոսում | 38 |
| 22.04.2025թ. | միջին «ա, միջին «բ» , ավագ «ա», ավագ «բ» | Ներառական կրթություն, ներառական մշակույթ, ներառված երեխա | 71 |
| 28.05.2025թ. | միջին «ա, միջին «բ» , ավագ «ա», ավագ «բ» | Ընտանեկան կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը երեխայի վրա | 52 |
| 02.06.2025թ.<br>04.06.2025թ.<br>06.06.2025թ. | կրտսեր 2-րդ «ա», «բ», միջին «ա, միջին «բ» , ավագ «ա», ավագ «բ» | Առողջ սնունդ և մանուկների պայծառ ժպիտներ | 26<br>39<br>42 |

## 5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

| Ցուցանիշը | 2022-2023 | 2023-2024 | 2024-2025 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը | 9 | 11 | 11 | աճ |
| Մանկավարժական աշխատողների միջին շաբաթական ծանաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 10,22 | 10,72 | 10,72 | աճ |

*Տվյալներ հաստատության վարչական կազմի վերաբերյալ*

| Պաշտոնը | Անունը, ազգանունը, հայրանունը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատ վածը | Տվյալ հաստատությու-նում աշխատելու ժամանակահատ վածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | Մնացյան Ազգանուշ Սուրենի | 10 | 10 | - |
| Տնօրենի ուսումնական գծով տեղակալ, մեթոդիստ | Իկիլիկյան Շուշանիկ Վիգենի | 10 | 10 | - |
| Հաշվապահ | Պետրոսյան Անի Վալերիայի | 11 | 11 | - |
| Բուժքույր | Մարգարյան Աննա Հովսեփի | 11 | 11 | - |
| Տնտեսվար | Վարժապետյան Նաիրա Մարտունիկի | 11 | 11 | - |

*Տվյալներ մանկավարժական խորհրդի կազմի վերաբերյալ*

| Անուն, ազգանուն, հայրանուն | Զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը | Հաստատության մանկխորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Ազգանուշ Սուրենի Մնացյան | Տնօրեն | Բարձրագույն | 10 | - |
| Շուշանիկ Վիգենի Իկիլիկյան | Ուս. գծով տնօրենի տեղակալ, մեթոդիստ | Բարձրագույն | 10 | - |
| Պողոսյան Նուռա Սայաթի | դաստիարակ | միջին մասնագիտական | 11 | - |
| Ղարիբյան Նելլի Մելիքսեթի | դաստիարակ | բարձրագույն | 1 | - |
| Իկիլիկյան Աննա Գագիկի | դաստիարակ | միջին մասնագիտական | 11 | - |
| Կարապետյան Սոնյա Սամվելի | դաստիարակ | միջին մասնագիտական | 9 | 1-ին աստիճանի տարակարգ |
| Գրիգորյան Հերմինե Ջիվանի | դաստիարակ | բարձրագույն | 10 | - |
| Սահակյան Վարդիթեր Սպարտակի | դաստիարակ | բարձրագույն | 4 | 1-ին աստիճանի տարակարգ |
| Մելքոնյան Հասմիկ Հապետնակի | երաժշտության դաստիարակ | միջին մասնագիտական | 11 | - |
| Սիմոնյան Գայանե Արսենի | ֆիզկուլտուրայի հրահանգիչ | բարձրագույն | 4 | - |
| Էմմա Հովիկի Մարդոյան | Երաժշտության դաստիարակ | միջին մասնագիտական | 2 | - |
| Հակոբյան Ելենա | Հոգեբան | Բակալավր | 1 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գարեգինի | | /մասնագիտական/ | | |

| Ցուցանիշ | |
|---|---|
| ա. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն գիտական կոչում. | - |
| բ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերջին 5 տարում վերապատրաստում անցել նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում. | 6 |
| գ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերապատրաստվել որպես վերապատրաստող (դասախոս) և վարում են վերապատրաստման դասընթացներ. | 1 /տնօրեն/ |
| դ. որքան է մանկավարժական աշխատողների միջին տարիքը. | 40 |
| ե. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն միջազգային ու տեղական պարբերականներում(ամսագրերում) հրապարակված հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ. | 1 |
| զ. մանկավարժական աշխատողներից քանիսն են ուսումնական գործընթացում կիրառում ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ /ՏՀՏ/. | 11 |
| ը. որքան է մանկավարժական աշխատողների բացակայությունների ընդհանուր թիվը. | - |

**Տվյալներ հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ**

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. սահմանված ժամկետում ձևավորվել է սաների համակազմը՝ ըստ տարիքային խմբերի | Այո | |
| բ.ուսումնական հաստատությունում իրականացվում են մանկավարժական խորհրդի նիստեր և առկա է մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյան | Այո | |
| գ.ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին և տվյալ տարիքային խմբի ծրագրին (այդ թվում՝ կրթության պետական լիազոր մարմնի կողմից հաստատված հեղինակային և այլընտրանքային) համապատասխան. | Այո | |
| դ.ուսումնական հաստատությունում ձևավորվել է ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով խումբ և ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է վերջիններիս մայրենի լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ. | | Ոչ |
| ե.մանկավարժական աշխատողները տիրապետում են ուսուցման ժամանակակից (երեխայակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ և այլ) մեթոդներին և գործնականում կիրառում դրանք. | Այո | |
| զ. մեթոդիստը ցույց է տվել խորհրդատվական օգնություն մեթոդական, ուսումնական և դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար, անցկացրել է բաց պարապմունքներ, սեմինարներ, սեմինար-պրատիկումներ. | Այո | |
| է. մեթոդիստը վերահսկել է նախադպրոցական կրթական ծրագրի կատարումը. | Այո | |

| | | |
|---|---|---|
| ը.ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվել են ցուցադրական բաց պարապմունքներ | Այո | |
| թ.ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվել են պարապմունքներ. | Այո | |
| ժ.ուսումնական տարվա ընթացքում անցկացվել են պարապմունքներ համայնքային ենթակայության այլ կրթական հաստատություններում՝ գրադարան, երաժշտական դպրոց. | Այո | |

Սաների ընդունելությունը և համալրումը կատարվել է ըստ տարիքային խմբերի՝ առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 11.10.2021թ. N76-ն հրամանի դրույթներով: 2024-2025 ուստարվա ընթացքում գումարվել է մանկավարժական խորհուրդի 5 /հինգ/ նիստ: Դրանք արձանագրվել են հաստատության մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանում:

Ուսումնադաստիարակչական գործընթացը հաստատությունում կազմակերպվում է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթության հիմնական ծրագրի պահանջներին համապատասխան:

Հաստատություն 2024-2025 ուստարում ընդգրկված են եղել ազգությամբ եզդի 6/վեց/ սան, սակայն վերջիններիս մայրենի լեզվի դասընթաց չունենալու պատճառով, ուսումնադաստիարակչական գործընթացը իրականացվում է հայերեն լեզվով:

Հաստատության մանկավարժները վերապատրաստումների արդյունքում կատարելագործել են իրենց մասնագիտական գիտելիքները և ձեռք բերել նոր գիտելիքներ, որոնք կարողանում են գործնականում կիրառել: Ուսումնադաստիարակչական գործընթացում մանկավարժները տիրապետում և կիրառում են ուսուցման ժամանակակից մեթոդներ և ՏՀՏ գործիքներ:

Ուսումնական տարվա ընթացքում տնօրենը և մեթոդիստը վերահսկել են նախադպրոցական կրթական ծրագրի կատարումը, իրականացրել մանկավարժական աշխատանքի պլանավորում, ճիշտ կազմակերպում, ղեկավարում: Կադրերի հետ մեթոդական աշխատանքի

շրջանակներում իրականացրել են խորհրդատվություններ, սեմինարներ, սեմինար-պրակտիկումներ:

Ցուցադրական բաց պարապմունքներ անցկացվել են հաստատությունում գործող բոլոր տարիքային խմբերում երեխաների ճանաչողական դատիարակության, փորձարարության և հնարամտության խթանման, ինքնուրույն ուսումնական և ստեղծագործական գործունեության խրախուսման, ֆիզիկական դաստիարակության, երաժշտական ունակությունների բացահայտման ուղղությամբ: Ստորև ներկայացված են ուսումնական տարվա ընթացքում հաստատության տարբեր խմբերում անցկացրած ցուցադրական բաց պարապմունքները:

Կրտսեր 2-րդ Ա- 3 օրինակելի պարապմունք/ԻՇԱ,Ե,ՄՏՊ/

Կրտսեր 2-րդ Բ- 3 օրինակելի պարապմունք/ ԻՇԱ,Ե,ՄՏՊ/
Միջին Ա – 4 օրինակելի պարապմունք/ԽՁ,Ֆ,ԻՇԱ,ՄՏՊ/
Միջին Բ – 4 օրինակելի պարապմունք /ԽՁ,Ֆ,ԻՇԱ,ՄՏՊ/
Ավագ Ա- 4 օրինակելի պարապմունք/ ԽՁ/գրաճանաչություն/,Ֆ,ԻՇԱ, ՄՏՊ/
Ավագ Բ- 4 օրինակելի պարապմունք / ԽՁ/գրաճանաչություն/,Ֆ,ԻՇԱ, ՄՏՊ/
/ Սեղմագրերը տես «Օրինակելի պարապմունքների թղթապանակ»-ում/:
Հաստատությունից դուրս անցկացվել են պարապմունքներ և մշակութային այցեր՝ երեխաների ճանաչողական զարգացման, փորձարարության խթանման, ինքնուրույն ուսումնական և ստեղծագործական գործունեության, անվտանգության և վարքագծի կանոնների ուղղությամբ: Պարապմունքները անցկացվել են Գյումրիի «Մարիամ և Երանուհի Ասլամազյանների» պատկերասրահում, Շիրակի մարզային գրադարանում, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանում, «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ում, Ազատանի գրադարանում:













## 6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԸ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատությունն ունի գործող մեթոդկաբինետ, որը հագեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով: | + | |
| բ. ուսումնական հաստատությունն ունի<br>✓ մարզադահլիճ,<br>✓ միջոցառումների անցկացման դահլիճ<br>✓ այլ հատուկ ուսումնական խմբասենյակներ/ նկարչական սենյակ, հոգեբանի սենյակ, սենսորային սենյակ/, որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով և ուսումնադիդակտիկ նյութերով. | + | |







0123456789

 

**ԳՈՒՅՔԱՑԱՆԿ**

ԴԱՀԼԻՃ 1-ԻՆ ՀԱՐԿ

| **Գույքի անվանում** | **Ծածկագիր** | **Փաստացի** |
|---|---|---|
| 1. Դահլիճային աթոռ-նստարան | 001/2 | 2 |
| 2. Աթոռ նվ. կապույտ | 001/1 | 40 |
| 3. Պահարան սպիտակ | 002 | 1 |
| 4. Դաշնամուր | 027 | 2 |
| 5. Մանկական աթոռ փայտե | 001 | 30 |
| 6. Մանկական սեղան փայտե | 003 | 4 |
| 7. Շերտավարագույր /նվ./ | 034 | 12,96 քմ |
| 8. Գորգ դահլիճի 3*4 | 037 | 1 |
| 9.Երաժշտական թերապիայի տախտակ | 044/3 | 1 |
| 10. Շեփոր | 023 | 1 |
| 11. Թմբուկ | 023/1 | 1 |

| | | |
|---|---|---|
| 12. Դիոլ | 023/2 | 1 |
| 13.Աթոռ կաշվեպատ | 001/1 | 1 |

ԴԱՀԼԻՃ 2-ՐԴ ՀԱՐԿ

| **Գույքի անվանում** | **Ծածկագիր** | **Փաստացի** |
|---|---|---|
| 1. Դահլիճային աթոռ-նստարան | 001/2 | 4 |
| 2. Մանկական եռանիվ հեծանիվ | 019 | 10 |
| 3. Հեծանիվ / երկանիվ/ | 019/1 | 2 |
| 4. Կեգլի | 020/3 | 1 |
| 5. Շերտավարագույր /նվ./ | 034 | 12,96 քմ |
| 6. Երաժշտական համակարգ BERG AS-62M | 046 | 1 |
| 7. Սպորտային նստարան | 036/1 | 4 |
| 8. Փայտիկներ ցատկելու և սողալու համար | 048 | 1 |
| 9.Մարտկոց KALDO | 011 | 4 |

ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ

| **Գույքի անվանում** | **Ծածկագիր** | **Փաստացի** |
|---|---|---|
| 1. Զգայական ինտեգրացիայի մոդուլ | 044/2 | 1 |
| 2. Բիզիբորդ 50/50 (2 հատ տարբեր) | 044 | 2 |
| 3. Գեոբորդ | 044/4 | 1 |
| 4. Պահարան-տնակ | 002/1 | 2 |
| 5. Կլոր սեղան սպիտակ | 003/9 | 1 |
| 6. Աթոռ մանկական | 001 | 3 |
| 7. Գլխուղեղի կիսագնդերի ակտիվացման մոդուլ | 044/5 | 1 |

| | | |
|---|---|---|
| 8.Զարգացնող խաղեր | | 8 |
| 10.Տրամաբանական խաղեր | | 5 |
| 11. Ուսուցանող խաղեր | | 6 |

7. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏՆՕՐԻՆՈՒՄ

| Ցուցանիշ | | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի |
|---|---|---|---|---|
| ա. սան - մանկավարժ հարաբերությունը. | Սան / Մանկավարժ | 170/8 | 168/8 | 171/11 |
| բ. սան - սպասարկող անձնակազմ հարաբերությունը. | Սան / Սպաս. անձնակազմ. | 170/13 | 168/13 | 171/13 |
| գ. սան - վարչական անձնակազմ հարաբերությունը. | Սան / Վարչ. անձնակազմ | 170/5 | 168/5 | 171/5 |
| դ. խմբերի միջին խտությունը. | | 30 | 28 | 28,5 |
| ե. մեկ սանի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը. | | 30,092 | 30,601 | 30,857 |
| զ. մանկավարժի միջին աշխատավարձը. | | 130,8 | 116,6 | 120,2 |
| է. վարչական աշխատողների միջին աշխատավարձը. | | 133,0 | 133,0 | 116,25 |
| ը. սպասարկող կազմի միջին աշխատավարձը. | | 105,0 | 103,2 | 103,3 |
| թ. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը. | | - | - | - |
| ժ. ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը. | | 1800,0 | - | - |
| ժա. սոցիալապես անապահով ընտանիքներից սաների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց թիվը. | | 1 | 1 | 1 |
| ժբ. դրամաշնորհային և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ներդրումների տարեկան չափը. | | 1463,6 | 2690,4 | 1327,0 |
| ժգ. աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | | 40822,0 | 41126,3 | 45511,6 |
| ժդ. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | | 3210,0 | 3460,0 | 3568,8 |
| ժե. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | | - | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

Ախուրյան համայնքի ավագանու 25 մարտի 2022 թվականի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճարի արտոնություններ սահմանելու մասին» թիվ 42-Ա որոշում:

*Խմբերի թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Խմբերի թիվը | 2022-2023 | 2023-2024 | 2024-2025 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Կրտսեր II | 2 | 2 | 2 | Նույնն է |
| Միջին | 2 | 2 | 2 | Նույնն է |
| Ավագ | 2 | 2 | 2 | Նույնն է |
| Ընդամենը՝ | 6 | 6 | 6 | Նույնն է |

*Ըստ խմբերի սաների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Սաների թիվը | 2022-2023 | 2023-2024 | 2024-2025 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Կրտսեր II Ա | 31 | 29 | 26 | Նվազում 10,34% |
| Կրտսեր II Բ | 31 | 28 | 28 | Նվազում 10,34% |
| Միջին Ա | 26 | 31 | 30 | Աճ 3,3% |
| Միջին Բ | 24 | 31 | 27 | Աճ 14,8% |
| Ավագ Ա | 30 | 25 | 30 | Աճ 16,6% |
| Ավագ Բ | 30 | 24 | 30 | Աճ 20% |
| Ընդամենը՝ | 170 | 168 | 171 | Աճ 1,17% |

*Սյունակների տվյալները ներկայացված են 2024 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ:Տարվա ընթացքում գրանցվել է սաների թվի աճ կրտսեր 2-րդ ա,բ, միջին բ խմբերում:*

***Ընդհանուր տվյալներ սաների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար***

| Ցուցանիշ | 2022-2023 | 2023-2024 | 2024-2025 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ | 162 | 161 | 171 | Աճ 6% |
| Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա օգոստոսի 20-ի դրությամբ | 110 | 118 | 119 | Աճ 0,8 % |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սաների թիվը | 16 | 16 | 11 | Նվազում 31,2% |
| Ուսումնական տարվա ընթացքում սաների բացակայությունների միջին թիվը | 373 | 490 | 350 | Նվազում 33% |
| Ուսումնական տարվա ընթացքում ազատված սաների թիվը | 13 | 11 | 24 | Նվազում- 74% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ա. սաների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից գրավոր ներկայացված առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկությունների տոկոսը ներկայացվածի նկատմամբ. | Թիվը | Տոկոսը | 3 | 3 | 100% |
| բ. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ,էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն), դրանց թիվը, մասնակից ծնողների թիվը և սաների տոկոսը. | Թիվը | Տոկոսը | 5 | 25-28 | 80-85% |
| գ.ծնողական խորհրդի կազմում ԿԶԱՊԿ ունեցող սաների ծնողների թիվը եւ տոկոսը | Թիվը | Տոկոսը | - | - | - |
| դ. ծնողական խորհրդի կողմից հաստատության գործունեության վերաբերյալ ներկայացված կարծիքը քննարկվում է աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու ժամանակ. | **<u>Այո</u>** | Ոչ | | | |
| ե. ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները. | 10 հանդիպում<br>Հանդիպումների ընթացքում քննարկվել են միջոցառումներ, շաբաթօրյակներ, ցուցահանդեսներ ծառատունկ կազմակերպելու, զբոսանքներ, խաղեր, սպորտլանդիաներ և մշակութային այցեր կազմակերպելու և անցկացնելու, ընտանեկան լավագույն փորձի, առողջ ապրելակերպի, ներառական կրթության, դրական ծնողավարման մասին: | | | | |
| զ. ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը. | Ծնող- մանկապարտեզ կապը շատ ամուր հիմքեր ունի, նրանք ունեն ամենօրյա մասնակցություն մանկապարտեզի առօրյային,տեղեկացվում են գործող էլ. էջերի, հարթակների, «Ծնողների համար» տեղեկատվական պատի միջոցով: Մասնակցում են բաց դռների օրերին, սեմինարներին, իրազեկման միջոցառումներին: | | | | |
| է. այն ծնողների տոկոսը, որոնք օգտվում են նախարարության, համայնքի, հաստատության և կրթական այլ կայքերից: | 65-70% | | | | |







# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Նիստը գումարվել է 2024 թվականի սեպտեմբերի 16-ին:Նիստին մասնակցում էին ծնողական խորհրդի 18 անդամներից 18-ը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Հաստատության ծնողական խորհրդի նախագահի ընտրություն / զեկուցող Ա. Մնացյան/:

2. Ծնողխորհրդի աշխատանքների քննարկում:

Լսեցին՝ Տնօրեն Ա. Մնացյանի հաղորդումը հաստատության ծնողական խորհրդի նախագահի ընտրության մասին:

Արտահայտվեցին՝ Անի Աթոյանը, Նարինե Բաղդասարյանը, որոնք պատրաստակամություն հայտնեցին աջակցել մանկապարտեզի հետագա աշխատանքներում և առաջարկեցին նախագահի թեկնածուներ:

Լսեցին՝ Քննարկեցին ծնողխորհրդի անելիքները:

Արտահայտվեցին՝ Տ.Սուքիասյանը, Ա.Մախտեսյանը ովքեր մանկապարտեզում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատեց լավ:

Հաստատության ծնողական խորհրդի նախագահի ընտրություն կազմակերպելու նպատակով, առաջնորդվելով հաստատության կանոնադրության 46-րդ կետի պահանջներով.

Որոշեցին՝

1.Գրանցել ծնողխորհրդի նախագահի առաջադրված թեկնածուներին.

ա/ Աթոյան Անի

բ/ Դավինյան Լիլիթ

գ/Գևորգյան Սիրանուշ

2. Հաստատել ծնողխորհրդի նախագահի ընտրության քվեաթերթիկի նմուշը:

3.Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը 3 անդամից:

ա/Բահրիկյան Արմինե

բ/Եթարյան Արմինե

գ/Մարգարյան Մանուշ

4. Հաշվիչ հանձնաժողովի հրապարակած տվյալների հիման վրա ամփոփվեց հաստատության ծնողխորհրդի նախահագի ընտրության հետևյալ արդյունքները.

1. քվեարկության մասնակիցների թիվը 18/տասնութ/,

2.հաստատված քվեաթերթիկների թիվը 18/ տասնութ/,

3.օգտագործված քվեաթերթիկների թիվը 18/տասնութ/

4.անվավեր քվեաթերթիկների թիվ՝ 1/մեկ/

5.չօգտագործված քվեաթերթիկների թիվ ՝0/զրո/

6. Քվեարկության արդյունքներ.

ա/ 3 ձայն

բ/ 4ձայն

գ/ 10 ձայն

5. Կայացած ընտրության արդյունքների հիման վրա մեկ ուսումնական տարի լիազորությունների ժամկետով հյաստատության ծնողխորհրդի նախագահ է ընտրվում Գևորգյան Սիրանուշը:

6. Հիմք ընդունելով քննարկումները՝

Որոշեցին՝

1.Ակտիվորեն և հետևողական մասնակցել մանկապարտեզի աշխատանքներին՝ հաստատության որակի և արդյունավետության բարձրացման նպատակով:

2.Աջակցել տնօրենին ներքին գնահատման հաշվետվությունը թափանցիկ և տեսանելի դարձնելու նպատակով փակցնել հաստատության մուտքի մոտ:

3. Քարտուղար ընտրել Սարգսյան Գրետային:

Ծնողխորհրդի նախագահ՝

Քարտուղար՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Նիստը գումարվել է 2024 թվականի դեկտեմբերի 17-ին: Նիստին մասնակցում էին ծնողական խորհրդի 18 անդամներից 16-ը, հաստատության տնօրենը, մեթոդիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Օրակարգի հաստատում /զեկուցող՝ Ա. Մնացյան/:

2.Նոր տարվա միջոցառումներին ծնողների համագործակցության, մասնակցության մասին / զեկուցող՝ Ս.Գևորգյան/:

3. Առաջին եռամսյակում ծնողխորհրդի կատարած աշխատանքների մասին:

ԼՍԵՑԻՆ՝

1. Օրակարգի հաստատում:

Որոշեցին՝

1.Հաստատել ծնողխորհրդի նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ՝

2. Ամանորյա միջոցառումներին ընդառաջ միջանցքների, խմբասենյակների և դահլիճի ձևավորմանը մասնակից լինելու, երեխաների միջոցառումների հանդերձանքները պատրաստելու մասին:

Որոշեցին՝

2. Ծնողական խորհրդի,ինչպես նաև ցանկություն հայտնած ծնողների ջանքերով ձևավորել խմբասենյակները, դահլիճը և միջանցքները: Պատրաստել հանդերձանք երեխաների տոնական միջոցառումների համար:

ԼՍԵՑԻՆ՝ 3. Ծնողական խորհրդի առաջին եռամսյակի կատարած աշխատանքների մասին:

Որոշեցին՝

1. Բացառել ցանկացած դրամահավաքություն:

2. Ապավինել մանկապարտեզի միջոցներին, ձեռքի աշխատանքից լավ ծնողների և մանկավարժների աջակցությանը:

Ծնողխորհրդի նախագահ՝

Քարտուղար՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Նիստը գումարվել է 2025 թվականի փետրվարի 28-ին: Նիստին մասնակցում էին ծնողական խորհրդի 18 անդամներից 15-ը, հաստատության տնօրենը, մեթոդիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Օրակարգի հաստատում /զեկուցող՝ Ա. Մնացյան/:

2.Նախադպրոցականի դաստիարակության, կրթության և զարգացման հարցում մանկավարժ-ծնող համագործակցության ձևերն ու մեթոդները /Զեկուցող՝ Շ.Իկիլիկյան/:

3. Մասնակցություն գարնանային միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը /Զեկուցող՝ Ս.Գևորգյան/:

ԼՍԵՑԻՆ՝

1. Օրակարգի հաստատում:

Որոշեցին՝

1.Հաստատել ծնողխորհրդի նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ՝

2. Շ.Իկիլիկյանի զեկույցը նախադպրոցականի դաստիարակության, կրթության և զարգացման հարցում մանկավարժ-ծնող համագործակցության ձևերի ու մեթոդների մասին:

Արտահայտվեց՝

Ծնողխորհրդի անդամ Գ. Սարգսյանը առաջարկեց կազմակերպել «Ծնողական սրճարան»՝ բաց քննարկումների համար:

Որոշեցին՝

1.Լինել աչալուրջ երեխաների կրթության և դաստիարակության հարցում, անհրաժեշտության և կարիքի դեպքում հարցը բարձրաձայնել և դիմել համապատասխան մասնագետների, օգտվել միայն հավաստի տեղեկատվությունից և կայքերից:

2. Ընդառաջ գնալ ծնողների առաջարկին:

ԼՍԵՑԻՆ՝

3. Մասնակցություն գարնանային միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը /Զեկուցող՝ Ս.Գևորգյան/:

Որոշեցին՝

1. Գարնանային միջոցառումների կազմակերպմանը ներգրավել ծնողներին, ընդունել նրանց հետաքրքիր և նորարար առաջարկությունները:

Տնօրեն՝

Ծնողխորհրդի նախագահ՝

Քարտուղար՝

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

«18» ապրիլի 2025 թվական գյուղ Ազատան

Նիստը գումարվել է 2025 թվականի ապրիլի 18-ին: Նիստին մասնակցում էին ծնողական խորհրդի 18 անդամներից 16-ը, հաստատության տնօրենը, մեթոդիստը, «Սահուն անցում» ծրագրի սոցաշխատող Զառա Գրիգորյան:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Օրակարգի հաստատում /զեկուցող՝ Ա. Մնացյան/:

2.Գարնանային շաբաթօրյակների կազմակերպում և անցկացում /զեկուցող՝ Ա. Մնացյան/

3. Սահուն անցման ուղղությամբ համագործակցություն դպրոցի հետ /զեկուցող՝ Ա. Մնացյան/:

4. Ծնող-երեխա համատեղ ցուցահանդեսի կազմակերպում նվիրված Մոլորակի օրվան /զեկուցող՝ Շ.Իկիլիկյան/:

ԼՍԵՑԻՆ՝

1. Օրակարգի հաստատում:

Որոշեցին՝

1.Հաստատել ծնողխորհրդի նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ՝

2. Ա. Մնացյանի զեկույցը գարնանային շաբաթօրյակներ կազմակերպելու, մանկապարտեզի բակը և հարակից տարածքը մաքրելու, նստարանները և բակային խաղերի գույները թարմացնելու, ծառատունկ կազմակերպելու մասին, այս ամենին ծնողների ակտիվ մասնակցության կարևորության, էկոլոգիական դաստիարակություն սերմանելու, շրջակա միջավայրը մաքուր պահելու մասին:

Արտահայտվեցին՝

Խմբերի ծնողական խորհուրդների նախագահները և հայտնեցին իրենց պատրաստակամությունը կազմակերպելու իրենց խմբի մասնակցությունը ապրիլյան շաբաթօրյակներին:

Որոշեցին՝

Մաքուր պահել շրջակայքը, երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն շրջապատի նկատմամբ, խնայողական վերաբերմունք և պատասխանատվություն: Նրանց ևս մասնակից դարձնել շաբաթօրյակներին:

ԼՍԵՑԻՆ՝

3. Սահուն անցման ուղղությամբ համագործակցություն դպրոցի հետ /զեկուցող՝ Ա. Մնացյան/:

Զեկուցող Ա. Մնացյանը խոսեց մանկապարտեզ-դպրոց համագործակցության, երեխաների մուտքը դպրոց անցնցում և սահուն կազմակերպելու մասին: Հարցին

անդրադարձավ նաև «Սահուն անցում» ծրագրի սոցաշխատող Զառա Գիրգորյանը: Նա խոսեց մանկապարտեզ-դպրոց փոխայցելությունների, նախապես մշակված գործողությունների իրականացման, դասվարների հետ և նոր միջավայրին ծանոթության կարևորության մասին և հայտնեց աջակցության պատրաստակամություն: Ա. Մնացյանը հավելեց, որ ամեն ինչ անում են, որ երեխաների մոտ սեր և մեծ ցանկություն առաջանա ուսման հանդեպ, դեպի նոր կրթօջախ, նոր ընկերներ և մանկավարժներ:

Որոշեցին՝

Ծնողների և դաստիարակների ուղեկցությամբ կազմակերպել փոխայցելություններ դպրոցի հետ, ծանոթանալ նոր միջավայրին: Կազմակերպել համատեղ միջոցառումներ:

ԼՍԵՑԻՆ՝

4. Ծնող-երեխա համատեղ ցուցահանդեսի կազմակերպում նվիրված Մոլորակի օրվան /զեկուցող՝ Շ.Իկիլիկյան/:

Զեկուցող Շ. Իկիլիկյանը ներկայացրեց Մոլորակի օրվան նվիրված ցուցահանդեսի պլանը: Առաջարկեց ակտիվ մասնակցություն ունենալ, ներկայացնել ծնող – երեխա թեմատիկ ձեռքի աշխատանքներ:

Որոշեցին՝

Իրազեկել ծնողներին առաջիկա ցուցահանդեսի մասին: Ներկայացնել բացառապես ձեռքի աշխատանքներ կատարված ծնողի և երեխայի կողմից: Ցուցահանդեսը նվիրել Երկիր մոլորակի պահպանությանը:

Տնօրեն՝ Ռ. Մնացյան

Ծնողխորհրդի նախագահ՝

Քարտուղար՝

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

«20» մայիսի 2025 թվական գյուղ Ազատան

Նիստը գումարվել է 2025 թվականի մայիսի 20-ին: Նիստին մասնակցում էին ծնողական խորհրդի 18 անդամներից 15-ը, հաստատության տնօրենը, մեթոդիստը, հոգեբանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Օրակարգի հաստատում /զեկուցող՝ Ա. Մնացյան/:
2. ՆՈՒՀ-ում 2024-2025 ուստարվա ընթացքում սաների առողջության և անվտանգության պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքների վերլուծություն /Զեկուցող՝ Ա. Մնացյան/:
3. Ընդհանուր ծնողական հանդիպման ժամանակ կատարված աշխատանքների բանավոր հաշվետվություն /Զեկուցող՝ Ս. Գևորգյան/:
4. Դպրոցական կրթությանը ավագ խմբի երեխաների պատրաստվածության մակարդակի վերլուծություն / Զեկուցողներ՝ Շ.Իկիլիկյան,Ե. Հակոբյան/:
5. «Հրաժեշտ մանկապարտեզին» միջոցառման քննարկում/ Զեկուցողներ՝ Շ.Իկիլիկյան,Ս.Գևորգյան/:

ԼՍԵՑԻՆ՝

1. Օրակարգի հաստատում:

Որոշեցին՝

1.Հաստատել ծնողխորհրդի նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ՝

2. ՆՈՒՀ-ում 2024-2025 ուստարվա ընթացքում սաների առողջության և անվտանգության պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքների վերլուծություն /Զեկուցող՝ Ա. Մնացյան/:

Ա. Մնացյանի զեկույցը ՆՈՒՀ-ում 2024-2025 ուստարվա ընթացքում սաների առողջության և անվտանգության պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին: Ա. Մնացյանը նշեց, որ հաստատությունում ստեղծված է անվտանգ միջավայր: Երեխաների առողջության պահպանության ուղղությամբ պարբերաբար իրազեկման աշխատանքներ են տարվում բուժքրոջ և դաստիարակների, հրավիրված ոլորտային մասնագետների կողմից: Սաների առողջության և անվտանգության պահպանման նկատառումներով՝ ըստ հաստատված պլանավորման, անցկացվել են օրինակելի պարապմունքներ, երեխաները ծանոթացել են վարքականոնների՝ տարիքին և զարգացմանը համապատասխան՝ խաղերի և իրավիճակների միջոցով:

Որոշեցին՝

Երեխաներին ՝ հեքիաթների, մուլտֆիլմների և խաղերի միջոցով ծանոթցնել անվտանգ վարքագծին և անվտանգ միջավայրին: Շարունակել ծանոթացնել

վտանգավոր իրավիճակներին, առարկաներին, սովորեցնել վերլուծել և գտնել ելքեր:
ԼՍԵՑԻՆ՝
3. Ընդհանուր ծնողական հանդիպման ժամանակ կատարված աշխատանքների բանավոր հաշվետվություն /Զեկուցող՝ Ս. Գևորգյան/:
Ծնողական խորհրդի նախագահ Ս. Գևորգյանը մանրամասն զեկուցեց ծնողական խորհրդի կատարած աշխատանքները: Ներկայացրեց ծնողների ներգրավվածությունը ՆՈՒՀ-ի աշխատանքներին, նրանց մասնակցությունը միջոցառումներին, դիտարկումները, առաջարկությունները:
Որոշեցին՝
Շարունակել բարձրացնել ընտանիք-ՆՈՒՀ համագործակցության արդյունավետության շրջանակը՝ կիրառելով նախընտրելի և նոր մոտեցումներ:
ԼՍԵՑԻՆ՝
4. Դպրոցական կրթությանը ավագ խմբի երեխաների պատրաստվածության մակարդակի վերլուծություն / Զեկուցողներ՝ Շ.Իկիլիկյան, Ե. Հակոբյան/:
Զեկուցող Շ. Իկիլիկյանը ներկայացրեց ավագ խմբի երեխաների զարգացման և գնահատման մակարդակի ընդհանուր պատկերը և այն աշխատանքները, որ տարվել են դեպի դպրոց սահուն անցումը կազմակերպելու ուղղությամբ՝ ՆՈՒՀ-դպրոց համագործակցության արդյունքում:Հոգեբան Ե. Հակոբյանը ներկայացրեց երեխաների հոգեբանական պատրաստվածությունը դպրոց հաճախելու հետ կապված: Նա դրական արտահայտվեց և ասաց, որ երեխաները մեծ ոգևորությամբ սպասում են և պատրաստ են թե՛ գիտելիքների տեսակետից, թե՛ հոգեբանորեն:
Որոշեցին՝
Կազմակերպել համատեղ ամառային ընթերցումներ տարրական դասարանների դասվարների հետ:
ԼՍԵՑԻՆ՝
5. «Հրաժեշտ մանկապարտեզին» միջոցառման քննարկում /Զեկուցողներ՝ Շ.Իկիլիկյան,Ս.Գևորգյան/:
Ծնողական խորհուրդը ներկայացրեց ծնողների առաջարկությունները: Շ. Իկիլիկյանը ներկայացրեց միջոցառման ճանչափը:
Որոշեցին՝
Աջակցել ավագ խմբերի դաստիարակներին միջոցառման կազմակերպման հարցերում, լինել անաչառ:

Տնօրեն՝
Ծնողխորհրդի նախագահ՝
Քարտուղար՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

«30» հունիսի 2025 թվական գյուղ Ազատան

Նիստը գումարվել է 2025 թվականի հունիսի 30-ին: Նիստին մասնակցում էին ծնողական խորհրդի 18 անդամներից 13-ը, հաստատության տնօրենը, մեթոդիստը, հոգեբանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Օրակարգի հաստատում /զեկուցող՝ Ա. Մնացյան/:
2.Ամառային առողջարարական աշխատանքների, շաբաթօրյակների կազմակերպում /Զեկուցողներ՝ Ա. Մնացյան, Ա. Մարգարյան/:
3. «Մոլորակս սրտումս» ցուցահանդես /Զեկուցող՝ Ա. Մնացյան/:
4.Երեխաների հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցություն տրամադրելու մասին/ զեկուցող՝ Ե.Հակոբյան/:
5. Ընդհանուր ծնողական հանդիպման ժամանակ կատարված աշխատանքների բանավոր հաշվետվություն /Զեկուցող՝ Ս. Գևորգյան/:

ԼՍԵՑԻՆ՝

1. Օրակարգի հաստատում:

Որոշեցին՝

1.Հաստատել ծնողխորհրդի նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ՝

2. Ամառային առողջարարական աշխատանքների, շաբաթօրյակների կազմակերպում /Զեկուցողներ՝ Ա. Մնացյան, Ա. Մարգարյան/

Ա. Մնացյանի և բուժքույր Ա Մարգարյանի զեկույցը ՆՈՒՀ-ում ամռան ամիսներին առողջարարական աշխատանքների կազմակերպման, դրանց կարևորության մասին: Տնօրենը հորդորեց ծնողներին լինել ակտիվ մասնակից մանկապարտեզի կազմակերպչական հարցերում, նախաձեռնողականություն դրսևորել և հանդես գալ հետաքրքիր գաղափարներով: Բուժքույրը խոսեց կոփման կարևորության, ծնողների իրարամերժ կարծիքների մասին, տրամադրեց գրականություն՝ինքնակրթության համար:

Որոշեցին՝

Ամառային առողջարարական աշխատանքների նախապատրաստմանը, խաղերի կազմակերպմանը լինել ակտիվ մասնակից: Տարածքի մաքրության, շաբաթօրյակների կազմակերպման հարցում ցուցաբերել ակտիվություն:

ԼՍԵՑԻՆ՝

3. «Մոլորակս սրտումս» ցուցահանդես /Զեկուցող՝ Ա. Մնացյան/:

Տնօրեն Ա. Մնացյանը իր խորին երախտագիտությունը հայտնեց ծնողական խորհուրդին «Մոլորակս սրտումս» ծնողական թեմատիկ ցուցահանդեսին ակտիվ

մասնակցության, մանկապարտեզի համար կարևոր, ծրագրային դիդակտիկ նյութերի պատրաստման համար: Նա նշեց, որ նմանատիպ միջոցառումները, երբ ծնողը իր ասելիքը ունի և գնահատված է, շատ ավելի մտերմացնում են ընտանիք-ՆՈՒՀ հարաբերությունները, մղում նոր գաղափարների:
Որոշեցին՝
Հանդես գալ նորանոր առաջարկներով, խթանելով նախադպրոցական կրթության իրականացմանը:
ԼՍԵՑԻՆ՝
4.Երեխաների հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցություն տրամադրելու մասին/ զեկուցող՝ Ե.Հակոբյան/:
Հարցի շուրջ արտահայտվեց հոգեբան Ե. Հակոբյանը: Նա մանրամասն ներկայացրեց ՆՈՒՀ-ում հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության ներդրմանը միտված պիլոտային ծրագիրը: Նա խոսեց ծնողների հարցումներին մասնակցության կարևորությունից, ներկայացրեց նաև հարցման արդյունքները: Ե. Հակոբյանը նշեց, որ ծրագիրը շարունակական բնույթ է կրելու և բոլորիս ներդրումը ծրագրի կայացմանը անչափ կարևոր է, քանի որ մենք երազում ենք հոգեպես կայուն և կոփված հասարակություն:
Որոշեցին՝
Հարցումներին ակտիվորեն մասնակցել, ներգրավվել ծրագրի իրականացմանը:
ԼՍԵՑԻՆ՝
5. Ընդհանուր ծնողական հանդիպման ժամանակ կատարված աշխատանքների բանավոր հաշվետվություն /Զեկուցող՝ Ս. Գևորգյան/:
Ծնողական խորհրդի նախագահ Ս. Գևորգյանը մանրամասն զեկուցեց ծնողական խորհրդի կատարած աշխատանքներից: Ներկայացրեց ծնողների ներգրավվածությունը ՆՈՒՀ-ի աշխատանքներին, նրանց մասնակցությունը միջոցառումներին, դիտարկումները, առաջարկությունները:
Որոշեցին՝
Շարունակել բարձրացնել ընտանիք-ՆՈՒՀ համագործակցության արդյունավետության շրջանակը՝ կիրառելով նախընտրելի և նոր մոտեցումներ:

Տնօրեն՝
Ծնողխորհրդի նախագահ՝
Քարտուղար՝


Նախարարության, համայնքի, հաստատության ,կրթական այլ կայքերից օգտվող ծնողների հարցման արդյունքներ
նախարարություն
համայնք
հաստատություն
այլ

. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| Ցուցանիշ | |
|---|---|
| ա. ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, այդ գործում կատարված ներդրումները. | + |
| բ.համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ հաստատության աշխատակազմի տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը. | + |
| գ. ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված ու անցկացված միջոցառումները և դրանց թիվը, մասնակից սաների և ծնողների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը. | + |
| դ.ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակիցների թիվը՝ ըստ ծրագրերի. | + |
| ե.ուսումնական հաստատությունը համագործակցում է իրեն սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ. | Այո |
| զ.ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքում գործող բժշկական հաստատության հետ՝ ԿԶԱՊԿ ունեցող երեխաների հայտնաբերելու եւ ն/դ կրթության մեջ ներգրավվելու նպատակով. | Այո |
| է.ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքի հանրակրթական դպրոցների հետ՝ իր սաների սահուն անցումը կրթական հաջորդ մակարդակ ապահովելու նպատակով. | Այո |

9.ա ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի հետ ընթանում է արդյունավետ և կառուցողական համագործակցություն: Համայնքի միջոցներով հատուկ հրակայուն նյութով մշակվել է տանիքը ամբողջ մակերեսով, տեղադրվել է 16–ելքով տեսախցիկների համակարգ, փոխվել է մեկ պատուհանի և մեկ դռան ապակիներ, համալրվել է ուսումնանյութական բազան:

9.բ Համայնքի հիմնախնդիրներին մանկապարտեզի աշխատակիցները ծանոթ են հիմնադրի և ոլորտային պատասխանատուների հետ ունեցած հանդիպումերից, զրույցներից, բարձրացված հարցերի քննարկումերից, հիմնադրի կայքից:
Աշխատակիցները մասնակցում են համայնքային միջոցառումներին՝ շաբաթօրյակներին, մշակութային միջոցառումներին, բաց քննարկումներին, ժողովներին, հանդիպումներին: Մասնակցության տոկոսը վերջին 3 տարիներին կազմում է 90-95%:

9.գ Հաստատությունը պարբերաբար բազմաբնույթ իրազեկման, տեղեկատվական, կրթական, մշակութային միջոցառումներ է կազմակերպում համայնքի բնակիչների՝ ծնողների, սաների համար: Միջոցառումների թվում եղել են սանիտարական նորմերի, անվտանգության կանոնների, էկոլոգիական դաստիարակության և շրջակա միջավայրի պաշտպանության, ներառական մշակույթի ձևավորման, անվտանգ վարքագծի, առաջին բուժօգնության թեմաներով միջոցառումներ, երեխաների և դաստիարակների ձեռքի աշխատանքների ցուցահանդես, ծնողական ցուցահանդես, ցերեկույթներ, տիկնիկային ներկայացումներ և այլն: Միջոցառումներին մասնակցություն են ունեցել մեր սաները, ծնողները, համայնքապետարանի և համայնքի տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ:

9.դ Հաստատությունը համագործակցության հուշագիր է կնքել «Հայկական կարիտաս» ԲՀԿ հետ «Իմ իրավունքը 2:Ներառական կրթություն Հայաստանում և Կոսովոյում» ծրագրի շրջանակներում:
Հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացնում ենք ներառական կրթություն՝ ներառական կրթության կայացման և զարգացման, ծնող-մանկապարտեզ-դպրոց համագործակցության խթանման,սահուն անցման, մանկապարտեզում բարենպաստ միջավայրի ապահովման, համայնքում կրթական համակարգից դուրս մնացած հաշմանդամ երեխաների հայտնաբերման և մանկապարտեզ ներառման համար: Շահառուներ են համարվել 4 երեխաներ, նրանց ծնողները, ներառման ինդեքս թիմի 8 անդամները:
2025 թվականի ապրիլից հաստատությունը Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ իրականացնում է «Հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության ներդրման պիլոտային ծրագիրը»:
9.ե Մանկապարտեզը նպատակային և արդյունավետ համագործակցություն է վարում Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ: ՏՄԱԿ-ը ցուցաբերել է մեթոդական աջակցություն: Աշխատակազմը պարբերաբար անցնում է վերապատրաստումներ:
9.զ ԿԶԱՊԿ ունեցող երեխաների հայտնաբերելու եւ ն/դ կրթության մեջ ներգրավելու նպատակով մանկապարտեզը համագործակցում է համայնքի բժշկական հաստատության հետ:
9.է.Հաստատություն-համայնքի դպրոց կապը ևս ամուր է, երեխաների սահուն անցումը զրագետ կազմակերպվում է: Տարվա ընթացքում կազմակերպվել են փորձի փոխանակումներ, համատեղ միջոցառումներ, փոխայցելություններ:

# 10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի, միջոցառման և գույքի առկայության մասին. |
|---|---|
| ա. ուսումնական հաստատությունում բոլոր սաների համար հասանելի եւ հավասարապես որակյալ կրթության կազմակերպման նպատակով հաստատության տարեկան պլանում սահմանված են գործողություններ. | Այո / Տե՛ս Տնօրենի տարեկան պլան 2024-2025/: |
| բ. ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանում ներկայացված են ԿԶԱՊԿ ունեցող սաների կրթության կազմակերպման որակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ, այդ թվում՝ մանկավարժների, դաստիարակների օգնականների վերապատրաստումներ. | Այո / Տե՛ս Տնօրենի տարեկան պլան 2024-2025, Հոգեբանի թղթապանակ, Մեթոդիստի թղթապանակ/: |
| գ.վերջին հինգ տարում մանկավարժական աշխատողները մասնակցել են վերապատրաստումների, այդ թվում՝ «Համընդհանուր ներառական կրթություն» թեմայով. | Այո /Վերապատրաստումներ իրականացվել են Շիրակի ՏՄԱԿ-ի, «Կարիտաս» ԲԿ-ի նախաձեռնությամբ, տես վերապատրաստման վկայականներ/:Վերապատրաստումները նպաստել են համակազմի շարունակական կրթությանը և գիտելիքների ձեռքբերմանը: |
| դ. վերջին հինգ տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած դաստիարակների օգնականների թիվը. | 6 |

## 11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿՋԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին |
|---|---|
| ա. ուսումնական հաստատությունում ամենուրեք (խմբասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն)տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն. | Ուսումնական հաստատության մուտքի մոտ ունենք աջ և ձախ կողմերից թեքահարթակ:<br><br>Ֆիզիկական մատչելիությունը մասաբ ապահովված է:<br><br>Հաստատության դռները լայն են բացվում: Որոշ տեղեր կան շեմեր, որոնք կարող են դժվարություն առաջացնել տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար: |
| բ. ուսումնական հաստատությունն ունի ԿՋԱՊԿ ունեցող սաների մանկավարժահոգեբանական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցմանկավարժ, հոգեբան և այլն). | Հաստատությունը համագործակցում է Շիրակի ՏՄԱԿ –ի հետ: Մանկավարժահոգեբանական աջակցության թիմը կազմված է 3 մասնագետներից՝ լոգոպետ, հատուկ մանկավաժ և սոցմանկավարժ: Աջակցող թիմը բարեխղճորեն և պարտաճանաչ կատարում է իր աշխատանքը, ցուցաբերում երեխայի կարիքին համապատասխան աջակցություն, վարում է ԱՈՒՋՊ-ն: Հաստատությունը ունի հոգեբանի հաստիք, այս մասով երեխաները աջակցություն ստանում են մեր մասնագետից:<br><br>4/4 |
| գ. ԿՋԱՊԿ ունեցող սաներն ապահովված են ֆիզիկական և ճանաչողական զարգացման համար անհրաժեշտ խաղային նյութերով, պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով. | Այո: Հաստատությունը ստեղծել է հոգեբանի և լոգոպետի ռեսուրս սենյակներ, ֆիզկուլտուրայի դահլիճ լուսասենսորային սենյակ հազեցած սաների համար եզրակացությամբ հաստատված անհրաժեշտ |

| | |
|---|---|
| | պարագաներով, ֆիզիկական և ճանաչողական զարգացման համար անհրաժեշտ խաղային նյութերով, պիտույքներով, հարմարանքներով: |
| դ. ուսումնական հաստատության խմբասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿՋԱՊԿ ունեցող սաները մեկուսացված չեն. | Այո |
| ե. ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ՝ ԿՋԱՊԿ ունեցող սաների հետ իրականացվող անհատական եւ խմբային աշխատանքների համար. | Հաստատությունն ունի 2 ռեսուրս սենյակ: |

12. ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի առկայության մասին |
|---|---|
| ա. անհատական ուսուցման և զարգացման պլանները մշակվում են՝ համաձայն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթական ծրագրերի՝ հաշվի առնելով սաների կարիքները, ընդունակությունները, հնարա-վորությունները, ձեռքբերումները և առաջընթացը. | Այո: Տե՛ս սաների ԱՈՒԶՊ-ները: |
| բ.մանկավարժները գիտակցում են ներառականության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում են իրազեկման եւ կարծրատիպերի կոտրմանն ուղղված աշխա- տանքներ. | Այո<br><br>Ժողովների արձանագրություններ,եզրակացություններ |
| գ. մանկավարժներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և առանձնահատկություններից. | Տե՛ս «Ներառման ինդեքս» թիմի աշխատանքների գործողությունների պլանը և արձանագրությունները: |
| դ. մանկավարժները կարողանում են կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտնաբերել և ուսումնական նյութերում և հաղթահարել նույնիսկ սեփական վարքագծում. ինչպես նաև ծնողների շրջանում): | Տե՛ս «Ներառման ինդեքս» թիմի աշխատանքների գործողությունների պլանը և արձանագրությունները: |

## 13. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

| Ցուցանիշ | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության այն սաների թիվը և տոկոսը, որոնք ունեն ԿԶԱՊԿ. | - | 168/8 սան<br>4,7% | 171/4 սան<br>2,3% |
| բ. ԿԶԱՊԿ ունեցող սաների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ օր/սան. | - | 32/8 | 26/4 |
| գ. լրացուցիչ կրթական ծրագրերում ներառվող՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների թիվը և տոկոսը. | - | - | - |

## 14. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՌԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Ցուցանիշ | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի |
|---|---|---|---|
| ա. սեռերի հարաբերակցությունը | 94տղա/68աղջիկ | 90տղա/78աղջիկ | 82 տղա/89 աղջիկ |
| բ. ուսումնական հաստատությունում ընդգրկված ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը. | 4 սան | 5 սան | 6 սան |